## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 24 դեկտեմբերի 2025թ-ին կնքված «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-26/21-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագրի

ք.Երևան «    »    2026թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Օֆելյա Ազարումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, ինչպես նաև «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-26/21-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2026 թվականի համար հատկացվել է 3 135 000 /երեք միլիոն հարյուր երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հավելված 1-ի և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 2-ի և հավելված 3-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2026թ-ի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 | Ք.Երևան, Լ. Ներսիսյան 1, 103 տրձք. |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Կոնվերս բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011022085 | Հ/Հ 1930009490430100 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 02701579 |
| -------------------------------- / ստորագրություն / | -------------------------------- / ստորագրություն / |
| Կ.Տ | Կ.Տ |

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2026.01.23 16:00:33 AMT

Digitally signed by AZARUMYAN OFELYA 6911850576
Date: 2026.01.23 15:04:34 AMT

*Հավելված թիվ 1*
*«24» դեկտեմբերի 2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-26/21-1 ծածկագրով պայմանագրի*
*«        »                    2026թ. կնքված N 1 Համաձայնագրի*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | *գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)* | *անվանումը* | *տեխնիկական բնութագիրը* |
| *1* | 64211140/502 | Կարճ հաղորդագրությունների (sms) ուղարկման ծառայություններ | Կարճ հաղորդագրությունների (sms) ուղարկման ծառայություններ Մալբրի էլեկտրոնային փաստաթղթաշարժի և Քաղաքացիների հետադարձ կապի մշտադիտարկման համակարգերի, Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի ծրագրային համակարգերի ինտեգրման և SMS- հաղորդագրություններ ուղարկելու ծառայության իրականացում – 300 000 հաղորդագրության համար:<br>Նպատակը: Ծառայության մատուցումը նպատակ ունի ապահովելու Մալբրի էլեկտրոնային փաստաթղթաշարժի և Քաղաքացիների հետադարձ կապի մշտադիտարկման համակարգերի միջոցով, ինչպես նաև Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակից sms հաղորդագրությունների միջոցով լրացուցիչ ծանուցում իրականացնել օգտվողներին: Պատվիրատուն պետք է ունենա հնարավորություն՝ ստանալու պարբերական հաշվետվություններ ուղարկված և ստացված հաղորդագրությունների վերաբերյալ:<br>Տեխնիկական փոխինտեգրում: SMS հաղորդագրություններ ուղարկելու համար ծառայություն մատուցող ընկերությունը պետք է տրամադրի նաև ծրագրային API, որի միջոցով նախապես ստացված Token-ի օգնությամբ հնարավոր լինի PUSH ծրագրային մեթոդով իրականացնել հաղորդագրությունների ուղարկում:<br>Ծրագրային API-ի ուղարկման համար անհրաժեշտ պետք է լինի ամեն անգամ ուղարկել հետևյալ պարամետրերը՝<br>1. Token Key<br>2. Հաղորդագրության տեքստ<br>3. Հեռախոսի համար,<br>API-ի միանալու համար պետք է սահմանվեն անվտանգության գործառույթներ՝<br>1.HTTPS գաղտնագրում<br>2. IP հասցեով հարցումների սահմանափակում:<br>Ծառայությունը պետք է մատուցվի բացառապես ՀՀ տարածքում գտնվող սերվերների և ենթակառուցվածքի միջոցով: Ծառայություն մատուցողը պետք է հանդիսանա VAS օպերատոր և պետք է ունենա գործող կնքված պայմանագրեր ՀՀ գործող բջջային կապի օպերատորների հետ:<br>Կարճ հաղորդագրությունների ուղարկման համար պետք է հնարավոր լինի սահմանել ալիաս (ներ), նախնականը՝ «e-Gov.am»:<br>Կատարողը պարտավոր է ունենալ ծառայության մատուցման համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող համապատասխան հավաստագրերը:<br>Հաշվետվություններ ուղարկված և ստացված հաղորդագրությունների վերաբերյալ՝<br>Պետք է ստեղծվի ուղարկված և ստացված հաղորդագրությունների վերաբերյալ հաշվետվողական այնպիսի գործիքակազմ, որը թույլ կտա ստանալ անհրաժեշտ հաշվետվություն ըստ ժամանակահատվածի, հեռախոսահամարի և նրանց համադրության:<br>Ընդհանուր պահանջներ:<br>Կատարողը իրականացնում է<br>● Ներդրման/տեղակայման և կարգաբերման աշխատանքները<br>● Ծառայության պատշաճ մատուցումը և սպասարկումը<br>● Առաջացած խնդիրների պատշաճ և շտապ կարգավորում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | *Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց, ընդ որում՝ մեկ sms հաղորդագրության արժեքը կհաշվարկվի ընդհանուր գնի և քանակի հարաբերության ստացմամբ: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

________________________________

/ ստորագրություն /

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ
Ք.Երևան, Լ. Ներսիսյան 1, 103 տրծք.
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930009490430100
ՀՎՀՀ 02701579

________________________________

/ ստորագրություն /

Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2026.01.23 16:00:58 AMT

Digitally signed by AZARUMYAN OFELYA 6911850576
Date: 2026.01.23 15:12:03 AMT

*Հավելված թիվ 2*
*«24» դեկտեմբերի 2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-26/21-1 ծածկագրով պայմանագրի*
*«          »                    2026թ. կնքված N 1 Համաձայնագրի*

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Չափման միավոր | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1 | դրամ | 3135000 | 3135000 | 1 | Ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 1 | 2026թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը |

* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը։

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

________________________________
/ ստորագրություն /

Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2026.01.23 16:01:23 AMT

**ԿԱՏԱՐՈՂ**
«Նիկկիտա Մոբայլ» ՍՊԸ
Ք.Երևան, Լ. Ներսիսյան 1, 103 տրծք.
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930009490430100
ՀՎՀՀ 02701579

________________________________
/ ստորագրություն /

Կ.Տ

Digitally signed by AZARUMYAN OFELYA 6911850576
Date: 2026.01.23 15:12:27 AMT

*Հավելված թիվ 3*
*«24» դեկտեմբերի 2025թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-26/21-1 ծածկագրով պայմանագրի*
*«        »                    2026թ. կնքված N 1 Համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 1 | 64211140/502 | Կարճ հաղորդագրություններ ի (sms) ուղարկման ծառայություններ | - | 1306250 | 1306250 | 2090000 | 2090000 | 2090000 | 2090000 | 2090000 | 2090000 | 3135000 | 3135000 | 3135000 | 3135000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
***Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

________________________________
/ ստորագրություն /
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ
Ք.Երևան, Լ. Ներսիսյան 1, 103 տրծք.
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930009490430100
ՀՎՀՀ 02701579

________________________________
/ ստորագրություն /
Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2026.01.23 16:01:46 AMT

Digitally signed by AZARUMYAN OFELYA 6911850576
Date: 2026.01.23 15:17:33 AMT